ԿԱՐԵՆ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՅՈՒԹԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո սկսվեցին կրթական ոլորտի կատարելագործման ուղիների որոնումները, անհրաժեշտություն առաջացավ ստեղծել և պահպանել ազգային դպրոցի սկզբունքները: Այսինքն, Հայաստանի հանրակրթական համակարգը մտավ անցումային ժամանակաշրջան:

Համաշխարհային կրթական համակարգի պահանջներին համաձայն՝ երկրում ներկայումս ընթանում է նոր կրթական գործընթացի մշակումն ու կիրառումը: Այս պրոցեսի ժամանակ, անշուշտ, էական փոփոխությունների են ենթարկվում որոշակի տեսություններ, խարխլվում են մի շարք գաղափարների հենքեր, իսկ դրան զուգահեռ ի հայտ են գալիս նոր մոտեցումներ, նոր հետազոտություններով և ուսումնասիրություններով ամրանում են նախկինում ետին պլան մղված, շատ հաճախ նաև մերժված բազմաթիվ կարծիքներ: Այսպիսի իրավիճակում միանգամայն բնականաբար ուսուցիչների կողմից դասարանում դեռահասներին նոր տեսակետների և գաղափարների մատուցման խնդիրները ժամանակ և զգուշություն են պահանջում:

Երկար ժամանակ նոր ծրագրերի բացակայության պատճառով մեր երկրում բավականին երկար էր նաև պատմության դասավանդման ճգնաժամը[1]: Ներկայումս նույնպես շատ դժվարություններով է ուղեկցվում ուսուցչի կողմից իրադարձություններով և փաստերով հարուստ պատմության դասի մատուցումը, ուսուցումը /միջպետական հակամարտություններ, համաշխարհային պատերազմներ և այլն/: Դպրոցում, դասի ճիշտ չկազմակերպման պայմաններում, աշակերտները նախ չեն կարողանում ընկալել ուսուցչի մատուցումը և հետևաբար տանը չեն կարողանում նաև լիարժեք յուրացնել դասը՝ շատ հաճախ կապված ուսուցչի մեթոդների սխալ ընտրության հետ:

Դպրոցում ուսուցչի նկատմամբ վերաբերմունքը կախված է նաև նրանից թե ինչպես է ուսուցիչը դասավանդում և տիրապետում իր առարկային: Օգտագործում է արդյոք հնարավոր մեթոդներն ու հարմար եղանակները թե ոչ: Իսկ արդյունավետ դասավանդումը անհնար է առանց մեթոդական բազմազանության, որի անհրաժեշտությունն էլ ավելի շատ է վերը նշված դասերի ժամանակ: Այսինքն, պատմության դասի ժամանակ մեթոդը պետք է դարձվի

[1] ՀՀ հանրակրթական դպրոցներում բավականին երկար ժամանակ պատմություն առարկան դասավանդվել է տարբեր դասագրքերով, չեն եղել միասնական մշակված ծրագրեր և այլն:

ալգորիթմ՝ ուսուցիչների և աշակերտների գործունեության փոխկապակցված կանոնը իրենց աշխատանքներում[2]:

Առաջին համաշխարհային պատերազմի ուսուցումը մեր երկրի հանրակրթական դպրոցում ներկայումս իրականացվում է 2 փուլերով՝ 7-րդ և 10-րդ դասարաններում: 7-րդ դասարանում Առաջին աշխարհամարտին աշակերտները ծանոթանում են և՛ Հայոց պատմություն, և՛ Նոր պատմություն առարկաների դասաժամերին, իսկ 10-րդ դասարանում նյութին հանդիպում են միասնական, որոշակի համալրված տեսքով[3]:

Աշակերտներին դասը մատչելի մատուցելու համար պատմության ուսուցիչը նախ և առաջ պետք է ճիշտ կողմնորոշվի մեթոդների ընտրությունների հարցում, դասին նախապատրաստվելիս պետք է հասկանա թեմայի դժվարամատչելի կամ հեշտ ընբռնելի լինելը, ինչից էլ ելնելով կարողանա ճիշտ ընտրել անհրաժեշտ մեթոդը: Հարկ է նշել, որ մեթոդների ընտրությունը իրենից ներկայացնում է դժվար գործընթաց և ուսուցչից պահանջում է որոշակի ժամանակ:

Գիտնականների մի հոծ խումբ, Յու. Կ. Բաբանսկու գլխավորությամբ, առանձնացրել է ուսուցման մեթոդների ընտրության համար հետևյալ անհրաժեշտ պայմանները.

1. ուսուցիչներն իրենց կարողություններով /փորձ, հմտություն, պատրաստվածության աստիճան և այլն/ պետք է կարողանան որոշել թե կոնկրետ դասը որքան է առանձնահատուկ և օրինաչափ ամբողջ ուսումնական ծրագրում,

2. ուսուցիչը պետք է կարողանա որոշել նաև թե այդ դասի լուսաբանումը ինչ չափով է նպաստում ընդհանուր ուսուցման նպատակներին հասնելու համար,

3. շատ կարևոր է նաև ուսուցչի կողմից դպրոցականների ուսումնական պրոցեսի նկատմամբ ունեցած հետաքրքրությունների և ունակությունների ճիշտ ընկալումը /տարիքային առանձնահատկությունները, պատրաստվածության մակարդակը, դպրոցական կոլեկտիվի առանձնահատկությունը/,

4. արտաքին պայմանները /աշխարհագրական դիրք, շրջապատ/ և այլն:

Ուսուցչի կողմից, յուրաքանչյուր դասից առաջ նշված պայմանների հիմնական մասի հաշվի առնելը նպաստելու է, որ դասը հաջողված լինի[4]:

---

[2] А.Т.Степанищев, История Отечества: преподавание в школе, Москва-2001, стр. 7.

[3] Տես 7-րդ և 10-րդ դասարանների պատմության դասագրքերը:

[4] И. В. Берельковский, А. С. Павлов – методика преподавания истории в общеобразовательной школе, Москва, 2001, стр. 81.

Միևնույն ժամանակ շատ կարևոր է որպեսզի ուսուցիչը դասին նախապատրաստվելու ընթացքում հասկանա թե ինչ խնդիրներ է ինքը լուծելու յուրաքանչյուր դասի ժամանակ.

- կրթական /Առաջին համաշխարհային պատերազմը որպես համաշխարհային պատմության մաս, իսկ հայերը այդ պատերազմի մեջ ներգրավված ժողովուրդ/,
- դաստիարակչական /հայրենիքի, հայրենասիրության, հերոսության, ինքնանվիրման գաղափարական հասկացողությունները և դրանց արմատավորումը/,
- զարգացողական /աշակերտների մոտ տեղեկատվական բազայի ստեղծումը, համաշխարհային պատմության մեջ մատուցվող երևույթի դերի և տեղի ցուցադրումը, նրանց մոտ համեմատական և վերլուծական գործընթացի զարգացումը/:

Քանի որ աշակերտները հանրակրթական ուսումնական գործընթացում Առաջին համաշխարհային պատերազմի վերաբերյալ առաջին անգամ տեղեկություններ են ստանում 7-րդ դասարանում, ապա անհրաժեշտ է որպեսզի այդ դասերը ուսուցչի կողմից մատուցվեն ***ուսուցման պրոբլեմային մեթոդի*** օգտագործմամբ և քանի որ Առաջին աշխարհամարտի վերաբերյալ տեղեկություններ աշակերտներին մատուցվում են զուգահեռաբար երկու առարկաների դասերի ժամանակ, ապա այդ դասերը պետք է մատուցվեն ***զուգակցման մեթոդի*** օգտագործմամբ, ինչպես նաև մատչելի նոր նյութերով համալրված: Իսկ 10-րդ դասարանում Առաջին համաշխարհային պատերազմի վերաբերյալ դասը պետք է տրվի ***ամրապնդման մեթոդի*** (ընդգծումները-Կ.Փ.) օգտագործմամբ:

Պրոբլեմային մեթոդի շնորհիվ ուսուցիչը պետք է կարողանա տարաբնույթ հարցադրումներով դասը վերածել հարցերի ու պատասխանների, ինչի արդյունքում աշակերտներն իրենց կամքից անկախ կընկալեն պատերազմին վերաբերվող նյութը: Կկարողանան ըմբռնել աշխարհի նոր վերաբաժանման համար սկսված պատերազմում յուրաքանչյուր մասնակից պետության և ժողովրդի շահերն ու իղձերը: Կհասկանան ռուսական զինված ուժերի կազմում հայ ժողովրդի մասնակցության պատճառները և խնդիրները, հայերի կատարած ներդրումները և կկարողանան ճիշտ գնահատականներ տալ այդ ժամանակահատվածում սկսված հայկական կամավորական շարժմանը:

«Ինչու՞ երկու միապետությունները (Ռուսաստանը և Գերմանիան), որոնք կապված էին ընդհանրական պատմական ճակատագրով, բարեկամական դինաստիաների հանգույցներով, սերտ առևտրական համագործակցությամբ հայտնվեցին ճակատային գծի տարբեր կողմերում առավել ևս, երբ չկար ոչ ուղղակի հակասություններ և ոչ էլ միմյանց նկատմամբ տերետորիալ

նկրտումներ» հարցի պատասխանը փնտրելիս, աշակերտը անդրադարձ է կատարելու մինչև պատերազմական գործողությունները, այնուհետև հասկանալու է պատերազմի պատճառները, տարբերակելու է թե հատկապես որ երկրների համար է այդ պատերազմը արդարացի կամ նվաճողական, ինչպես նաև հասկանալու է այդ պատերազմի անխուսափելիությունը:

«Երբ ռուսական վերնախավին հայտնի էր, որ Ռուսաստանը պատրաստ չի այդպիսի լայնածավալ գործողություններով պատերազմի, ապա ինչու՞ այդ պարագայում երկիրը անմիջապես ներքաշվեց մարտական գործողությունների մեջ» հարցին պատասխանելիս, աշակերտը պետք է նախօրոք հասկացած լինի, թե ինչու է Ռուսաստանի զինված ուժերի մակարդակը զորահավաքային ժամկետների առումով զիջում Գերմանիայի զինված ուժերի մակարդակին և ապա նոր կարողանա ընկալել այդ ժամանակ պետական շահերի գերակա լինելու հանգամանքը: Աշակերտը այս պարագայում կհասկանա նաև Ռուսաստանի վերաբերմունքը այլ պետությունների և նրանց ազգային շահերի նկատմամբ:

«Ինչու՞ էր ռուսական ռազմակ ոգին ավելի բարձր Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում, երբ մարտական գործողությունները ծավալվում էին Ռուսաստանի սահմաններից դուրս և ավելի ցածր պատերազմի վերջում, այն ժամանակ երբ ռազմական գործողությունները սկսեցին ծավալվել Ռուսաստանի սահմանների ներսում[5]» հարցադրմամբ աշակերտին պետք է հասկացնել, որ պատերազմի սկզբում պետությունն ավելի հեշտ էր կարողանում կրել զրկանքները, այն ուղեկցվում էր միայն ֆինանսական որոշակի դժվարություններով և զորահավաքով, իսկ պատերազմի վերջում, երբ մարտական գործողություններ էին ծավալվում երկրի սահմանային հատվածներում և ռուսական հողերում՝ ռուս ժողովուրդն անմիջապես իր ուսերին էր կրում դժվարությունները, իր վրա էր զգում ավերածությունները: Այդ ամեն ինչի հետևանքով երկրում սկսված հակապատերազմյան ցույցերն ու գործադուլները վիճակը դարձնում էին գրեթե անտանելի:

Ուսուցիչը 10-րդ դասարանում ամրապնդման մեթոդի կիրառմամբ պետք է հասնի նրան, որպեսզի սովորողի կողմից նյութը կրկնակի ընկալվի, այսինքն նյութը իմաստավորվի և հենց դասի ժամանակ մատուցվող նյութը ամրապնդվի աշակերտների մոտ: Պետք է կապ ստեղծվի նոր և նախկինում մատուցված դասերի միջև, ուժեղացվի աշակերտների ուշադրությունը, ինչպես նաև ստուգվի նոր խնդիրների յուրացումը[6]:

---

[5] А.Т.Степанищев, Проблемные задачи по истории России, Москва-2001, стр. 79.
[6] М. Т. Студеникин, Методика преподавания истории в школе, Москва, 2002, стр. 57.

Աշակերտներին նյութը մատչելի դարձնելու համար շատ կարևոր է՝ անհրաժեշտ նախապայման, որպեսզի պատմության դասի ժամանակ օգտագործվի «Առաջին համաշխարհային պատերազմ» քարտեզը, իսկ ռազմական գործողությունների ուսուցումը պահանջում է նաև սխեմաներ: Մինչև քարտեզների օգտագործումը, ուսուցիչը՝ կողմնորոշմանը զուգահեռ, պետք է աշակերտներին սովորեցրած լինի քարտեզի վրա պատմական ինֆորմացիայի կարդալու կարողությունը: Քարտեզ հասկացող աշակերտը կարող է ավելի հեշտ վերլուծել և համեմատել քարտեզները, լուծել կազմվող խնդիրը, կարդալ նաև զորաշարժերի և ռազմական գործողությունների սխեմաները: Աշակերտը՝ Առաջին համաշխարհային պատերազմի վերաբերյալ քարտեզի վերլուծության հիման վրա, առանց այլ նյութերի օգտագործմամբ հասկանալու է, որ ռուսների համար 1914թ. հնարավորությունների բաց թողնման, 1915 - 1916թթ. որոշակի հաղթանակների տարիներ են եղել, իսկ 1917թ. մեծ ցնցումների տարի է եղել: Քարտեզի օգտագործմամբ աշակերտը կարող է նկարագրել պատերազմի յուրաքանչյուր տարվա արդյունքները և գնահատել ռազմական կամպանիաները:

Աշակերտներին սիստեմատիկաբար քարտեզների ցուցադրումը՝ որպես վերլուծության օբյեկտ, նրանց ցույց է տալիս թե ինչպիսի ճանաչողական հնարավորություններ են ամփոփված քարտեզում և ինչպես դրանք կարող են օգտագործվել[7]:

Դժբախտաբար, այսօր հանրակրթական դպրոցը բացի այն, որ չունի առանձնացված պատմության առարկայի դասարաններ, հիմնականում չունի նաև նախատեսված անհրաժեշտ քարտեզներ, իսկ եթե քարտեզներ էլ կան, ապա այդ քարտեզները 20 և ավելի տարիներ առաջ տպագրված քարտեզներ են:

Այդուհանդերձ, միայն և միայն ուսուցչի որակական հատկանիշների շնորհիվ է, որ թերի հագեցված պատմության առարկայի դասարաններում կամ առանց քարտեզների օգտագործմամբ պատմության դասի ժամանակ դասը դառնում է արդյունավետ և նյութը ընկալվում է աշակերտների կողմից:

Առաջին համաշխարհային պատերազմի դասավանդման առանձնահատկություններից է նաև այն, որ դասի ճիշտ մատուցման դեպքում սովորողներն էլ ավելի շուտ են ընկալելու պատմական զարգացման օրինաչափությունները, պատմական ճշմարտության վերականգնման համար մղված պայքարի կարևորությունը, ինչի արդյունքում էլ նրանց մոտ զարգանալու է ռազմահայրենասիրական գաղափարներ և միտումներ:

---

[7] М.В.Короткова, Наглядность на уроках истории, Москва-2000, стр. 15.